



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.4 (30)

Общественные и гуманитарные науки

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

Humanities and Social Sciences

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2019

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.4 (30)

Հասարակական և հումանիտար գիտություններ

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the Resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Д. Петросян
д.ф.н., проф. Л. Матевосян
д.ф.н., проф. Ю. Аветисян
д.ф.н., проф. А. Мурадян
д.ф.н., проф. В. Арутюнян
д.п.н., проф. Г. Аванесян
д.и.н., проф. С. Мкртчян
д.э.н., проф. А. Мнацаканян
д.э.н., проф. А. Саргсян
д.п.н., проф. Г. Керян
д.ф.н., доц. Ш. Паронян
к.ф.н., доц. Н. Варданын
к.ф.н., доц. В. Егиазарян
к.э.н., доц. К. Хачатрян
к.ф.н., ассист. Н. Погосян
к.ю.н., ассист. В. Григорян
к.ю.н., ассист. Т. Суджян
к.ю.н., ассист. А. Тавадьян
к.п.н., ассист. Д. Саргсян
к.и.н., ассист. Р. Карапетын
к.ф.н., ассист. К. Яралян

Editorial Board

DSc, Prof. D. Petrosyan
DSc, Prof. L. Matevosyan
DSc, Prof. Y. Avetisyan
DSc, Prof. S. Muradyan
DSc, Prof. V. Harutyunyan
DSc, Prof. H. Avanesyan
DSc, Prof. S. Mkrtchyan
DSc, Prof. H. Mnatsakanyan
DSc, Prof. H. Sargsyan
DSc, Prof. T. Keryan
DSc, Associate Prof. Sh. Paronyan
DSc, Associate Prof. N. Vardanyan
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan
PhD, Associate Prof. K. Khachatryan
PhD, Assistant Prof. N. Poghosyan
PhD, Assistant Prof. V. Grigoryan
PhD, Assistant Prof. T. Sujyan
PhD, Assistant Prof. A. Tavadyan
PhD, Assistant Prof. D. Sargsyan
PhD, Assistant Prof. R. Karapetyan
PhD, Assistant Prof. K. Yarlyan

Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարան, կուրսանտ
Գիտական ղեկավար՝ Հ. Մելիքսեթյան
Էլ. փոստ՝ davidkirakosyan93@inbox.ru

**ՀՀ-ՀԱՊԿ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՕՐԱԿԱՐԳԸ**

Հարավկովկասյան տարածաշրջանի ռազմաաշխարհաքաղաքական բարդ հարաբերությունների պայմաններում ռազմա-քաղաքական և տնտեսական ներուժի օբյեկտիվ գնահատականը կանխորոշում է Հայաստանի՝ մակրոտարածաշրջանային ինտեգրացիոն նախագծերին մասնակցելու ձգտումն ու պատրաստակամությունը:

ՀՀ-ն, լինելով ՀԱՊԿ հիմնադիր անդամ-պետություն, ակտիվ գործունեություն է ծավալում դաշինքի շրջանակներում: ՀՀ-ն մեծ ներդրում ունի կառույցի ռազմաքաղաքական և իրավական հիմքերի կայացման գործում: Հայաստանը փորձում է ամբողջ ծավալով մասնակցել ՀԱՊԿ նախաձեռնություններին՝ նպաստելով կառույցի կատարելագործմանը և իր ազգային անվտանգության միջավայրի ամրապնդմանը: ՀՀ-ի համար ՀԱՊԿ կարևորության մասին մատնանշվում է նաև Ազգային անվտանգության ռազմավարության և Ռազմական դոկտրինի փաստաթղթերում:

Ըստ Ազգային անվտանգության ռազմավարության՝ ՀՀ արտաքին անվտանգության ապահովման ռազմավարությունն իրականացվում է երեք հիմնական հարթություններով՝ միջազգային, տարածաշրջանային և համահայկական: Միջազգային ներգավման ռազմավարությունում կարևորվում է անդամակցությունը ՀԱՊԿ-ին, ինչը Հայաստանի անվտանգության ապահովման բաղադրիչներից է: Ազգային անվտանգության ռազմավարության մեջ նշվում է. «Պայմանագրի ռազմական բաղադրիչն արտոնյալ պայմաններ է ընձեռում անդամ-պետություններին ռազմատեխնիկական մատակարարումների հարցում, ինչն առաջնային կարևորություն ունի Հայաստանի համար» [1]:

Անվտանգության բնագավառի մեկ այլ առանցքային փաստաթղթում՝ Ռազմական դոկտրինում, միջազգային ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության առաջնահերթ ուղղությունների շարքին է դասվում ակտիվ և գործնական մասնակցությունը ՀԱՊԿ ծրագրերին: Դոկտրինում կարևորվում է ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունների մշակումը, տարածաշրջանային սկզբունքով հավաքական անվտանգության համակարգի զարգացումը, ԱՊՀ և ՀԱՊԿ հակաօդային պաշտպանության համակարգի կատարելագործումը, ռազմատեխնիկական համագործակցությունը, ռազմական կադրերի պատրաստումը [2]:

Ինչպես կարող ենք նկատել, հայեցակարգային փաստաթղթերում ՀԱՊԿ-ի դերը բավականին բարձր է գնահատվում ՀՀ ազգային անվտանգության ապահովման ոլորտում և համարվում է ՀՀ ռազմական պաշտպանության օրգանական մասը:

Հայաստանի համար անդամակցությունը ՀԱՊԿ-ին կարևորվում է հատկապես դաշինքի ընձեռած ռազմական բնույթի առավելություններով: Խոսքն առաջին հերթին այն մասին է, որ ՀԱՊԿ ռազմատեխնիկական համագործակցության բնագավառում կիրառվում է զեղչեր տրամադրող ռեժիմ: ՌԴ-ն 2003 թ.-ից ՀԱՊԿ անդամ երկրներին ռազմական նշանակություն ունեցող արտադրանք է մատակարարում ներուսական գներով: Այս հանգամանքը, իհարկե, ահռելի նշանակություն ունի ՀՀ համար՝ հաշվի առնելով զինատեսակների առկայության կարևորությունը ՀՀ և ԱՀ անվտանգության ապահովման գործում:

Ինչպես արդեն նշվել է՝ ՀԱՊԿ-ի առջև դրված կարևոր խնդիրներից է ՀՕՊ համատեղ համակարգի ստեղծումը: Այս համատեքստում, կարծում ենք, կարևոր է անդրադառնալ՝ «ՀՀ-ի և ՌԴ-ի միջև Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում ՀՕՊ միավորված տարածաշրջանային համակարգի ստեղծելու մասին» համաձայնագրին [3]: Այն Ռուսաստանի կառավարությունը հավանության էր արժանացել 2015 թ.-ի հոկտեմբերի 23-ին, իսկ ՀՀ ԱԺ-ն ընդունվել էր 2016 թ.-ի հունիսի 30-ին [4]: Այս համաձայնագրի վերաբերյալ իր կարծիքն է հայտնել նաև ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Բորյոյուժան՝ «Արդեն գործում են ռուս-բելառուսական և ռուս-ղազախական ՀՕՊ համարեղ համակարգեր, իսկ նմանապիպ համակարգը մի քանի տարի է, ինչ ձևավորվում է նաև Հայաստանի հետ: Տարածաշրջանային նման համակարգերի ստեղծումը գործընթացի առաջին փուլն է, երկրորդ փուլում այդ համակարգերը գործելու են նույն կանոններով, ինչը թույլ կտա հետագայում ՀՕՊ համակարգ ստեղծել նաև ՀԱՊԿ տարածքում» [5]: Այս առնչությամբ ՊՆ նախկին փոխնախարար Դ. Տոնոյանը նշել է՝ «Փաստաթուղթն իրավական հիմքեր է ստեղծում է Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում ՀՕՊ համակարգի ստեղծման համար՝ Հայաստանի և Ռուսաստանի պետական սահմանների շրջանակում: Դա թույլ կտա ՀՀ օդային տարածքի և պետության տարածքում գտնվող օբյեկտների պաշտպանության ընթացքում կիրառել ոչ միայն Հայաստանում տեղակայված 102-րդ ռուսական ռազմակայանի ՀՕՊ ուժերը և ավիացիան, այլև ՌԴ Հարավային ռազմական օկրուգի ուժերը: Դա ՀՀ և ՌԴ անվտանգության ապահովման հավելյալ երաշխիքներ կտրամադրի» [6]: Փաստորեն, ՀՀ-ն, ՀԱՊԿ-ում լինելով տարածաշրջանի միակ ներկայացուցիչը, միանում է ՀԱՊԿ ՀՕՊ համատեղ համակարգ ստեղծելու նախաձեռնությանը՝ հիմքում դնելով վերոնշյալ ռուս-հայկական միավորված համակարգը:

ՀՀ-ՀԱՊԿ հարաբերությունները բազմակողմանիորեն են զարգանում: Հատկանշական է ՀՀ-ի ակտիվ ներգրավվածությունը ՀԱՊԿ մի շարք զորավարություններին, որոնց մի մասն անց է կացվում Հայաստանում:

Աշխատանքի շրջանակներում անդրադարձ կատարենք վերոնշյալ զորավարություններից մի քանիսին. Մասնավորապես՝ 2008 թ. հունիս-օգոստոս ամիսներին Հայաստանում հաջողությամբ անցկացվեցին «ՀՀ ինքնիշխանության և տարածքային ամբողջականության համատեղ պաշտպանության գործողության նախապատրաս-

տում և անցկացում» թեմայով ՀԱՊԿ անդամ-պետությունների «Ռուբեժ-2008» հրամանատարաշտաբային համատեղ զորավարությունը [7], որը հնարավորություն ընձեռեց ստուգելու անդամ-պետությունների հավաքական պաշտպանվածության պատրաստվածությունը, ինչպես նաև մշակելու Հայաստանի հանդեպ հնարավոր ագրեսիայի սպառնալիքի կամ ագրեսիայի ակտի դեպքում ձեռնարկվելիք միջոցները:

ՀԱՊԿ 2009 թ.-ի մոսկովյան հանդիպման ժամանակ, որը վարում էր ՀԱՊԿ նախագահող երկրի ղեկավար Ս. Սարգսյանը, որոշում ընդունվեց «Օպերատիվ (Արագ) արձագանքման հավաքական ուժերի» (ԱԱՀՈՒ) ստեղծման մասին [8]: Այս ուժերի ձևավորմամբ ավելի ամրապնդվեց ՀԱՊԿ ռազմական բաղադրիչը:

«Փոխգործակցություն-2012-ը» զորավարությունն անդամ-պետությունների հատուկ ստորաբաժանումների մասնակցությամբ Հայաստանում անցկացվեց 2012 թ.-ի փետրվարի 19-ին [9]: Ըստ սցենարի՝ ԱԱՀՈՒ ուժերը պետք է ճնշեին ՀԱՊԿ անդամ-պետության դեմ ուղղված ռազմական ագրեսիան: Ջորավարության ընթացքում (ներգրավված էին 2000 մարդ և ավելի քան 500 միավոր ռազմական տեխնիկա) հատուկ ստորաբաժանումները հստակ իրականացրին իրենց առջև դրված խնդիրները: Ամփոփելով զորավարության արդյունքները՝ Ն. Բորոյուժան նշել է. *«Ջորավարություններն անցան շարժարժ մակարդակով: Բոլոր ստորաբաժանումները հաջողությամբ լուծեցին իրենց առաջադրանքներն ու, ամենակարևորը, դա արեցին համադրել ուժերով և շարժ սահուն»* [9]:

2015 թ.-ի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 4-ը ՀՀ ՊՆ «Բաղրամյան» զորավարժարանում անց են կացվել ՀԱՊԿ Հավաքական խաղաղապահ ուժերի «Անքակտելի եղբայրություն 2015» զորավարությունները, որին մասնակցել են 6 անդամ-պետությունների զինված ուժերի, ոստիկանության ստորաբաժանումները, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, ինչպես նաև ՀԱՊԿ Միացյալ շտաբի և քարտուղարության ներկայացուցիչները [10]: Ջորավարության հիմնական նպատակներն էին՝ ամրապնդել փոխըմբռնումը և համագործակցությունը զորավարություններում ներգրավված ՀԱՊԿ անդամ-երկրների խաղաղապահ զորախմբերի միջև, խաղաղապահ գործողության նախապատրաստման փուլում և խաղաղապահ խնդիրների լուծման ընթացքում ՀԱՊԿ ՀԽՈՒ զորախմբերի (ստորաբաժանումների) կառավարման բոլոր մակարդակների հրամանատարների և շտաբերի գործնական հմտությունների բարելավումը, հակամարտության դադարեցման և մեկուսացման խնդիրների լուծման միասնական մտահղացման մշակումը [10]:

2016 թ.-ի մայիսի 24-26-ը ՀՀ-ում տեղի ունեցավ ՀԱՊԿ անդամ-պետությունների ԱԱՀՈՒ ուժերի «Կոբալտ-2016» մարտավարամասնագիտական զորավարությունը [11]: Ջորավարությանը մասնակցեց 600-ից ավել անձնակազմ և շուրջ 40 միավոր տեխնիկա: Ջորավարության ընթացքում ստորաբաժանումները կատարել են հետևյալ խնդիրները՝ ահաբեկչական կազմակերպությունների գործունեության կանխարգելում, զենքի, պայթուցիկ նյութերի և թմրանյութերի ապօրինի շրջանառության

սահմանափակում: ՀՀ-ում անցկացված համատեղ վերջին զորավարությունը «Փոխգործակցություն 2017»-ն էր, որը ներառեց շուրջ 2000 զինվորականի և 400-ից ավելի ռազմական տեխնիկա [12]:

Վերոնշյալ զորավարությունները միայն մի քանիսն են ՀԱՊԿ շրջանակներում պարբերաբար անցկացվող զորավարություններից, որոնց մասնակցությունը անդամ-պետությունների զինծառայողներին զինում է նոր գիտելիքներով և հմտություններով:

2015 թ.-ի սեպտեմբերի 15-ին Տաջիկստանի մայրաքաղաք Դուշանբեում անց է կացվել ՀԱՊԿ ՀԱԽ նստաշրջանը, որտեղ Հայաստանը Տաջիկստանից ստացել է ՀԱՊԿ-ում նախագահության հերթափոխը: Նստաշրջանի ընթացքում Ս. Սարգսյանը ներկայացրել է առաջիկա տարում Հայաստանի նախագահության առաջնայնությունները՝

- ՀԱՊԿ հավաքական ներուժի մեծացում՝ համաձայն Կազմակերպության օրենսդրության և ժառանգորդության սկզբունքի,

- ՀԱՊԿ գործունեության հայեցակարգային հիմքերի և ճգնաժամային արձագանքման համակարգի հետագա զարգացում,

- ՀԱՊԿ գործունեության արդյունավետության բարձրացման ինստիտուցիոնալ ասպեկտների, այդ թվում՝ արտաքին քաղաքականության համակարգման կատարելագործման և միջազգային այլ կազմակերպությունների հետ համագործակցության զարգացման ուղղված հարցերի առաջադրում,

- ՀԱՊԿ համակարգի ուժերի ու միջոցների կառավարման համակարգի հետագա կատարելագործում, խաղաղապահ ներուժի մեծացում, ռազմատեխնիկական և ռազմատնտեսական համագործակցության խորացում, տարանցման և տեղափոխման լոգիստիկ բաղկացուցչի օպտիմալացում:

Ս. Սարգսյանը հավելել է. *«Մենք մտադիր ենք կենտրոնանալ միջազգային ահաբեկչությանը և ծայրահեղականությանը, նեոֆաշիզմի, շովինիզմի և այլադրյալության այլ ձևերի դրսևորումներին համարել հակազդելու հարցերի վրա: Այս համարեքստում կարևոր նշանակություն ենք տալիս նաև կիրերանվտանգության ոլորտում համարել ուժերի ակտիվացմանը»* [13]:

ՀՀ նախագահության ժամանակահատվածը նշանավորվեց իր ակտիվ գործունեությամբ և արդյունավետությամբ: 2015-16 թթ. ձեռնարկված միջոցառումներն ամփոփվեցին 2016 թ.-ի հոկտեմբերի 14-ին կայացած ՀԱՊԿ ՀԱԽ երևանյան նստաշրջանում, որին չէր մասնակցում Ղազախստանի նախագահ՝ Ն. Նազարբաևը: Նստաշրջանի ընթացքում ընդունված շուրջ երկու տասնյակ փաստաթղթերի շարքում, թերևս, կարելի է առանձնացնել մինչև 2025 թ. ՀԱՊԿ ռազմավարության ընդունումը, որը նաև Հայաստանի նախագահության շրջանի առաջնահերթություններից մեկն է: Ընդունված ռազմավարությունը ներառում է կառույցի զարգացման տեսանկյունից այնպիսի կարևոր կետեր, ինչպիսիք են՝

- ՀԱՊԿ հավաքական անվտանգության արդի մարտահրավերները և սպառնալիքները,

- ՀԱՊԿ ռազմավարական նպատակները և խնդիրները,

- ՀԱՊԿ հավաքական անվտանգության համակարգի զարգացման միջոցները:

Հայաստանի համար երևանյան գագաթաժողովը կարևորվեց նաև «Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ հայտարարության» ընդունմամբ: Հայտարարության մեջ կարևորվում է Վիեննայում և Սանկտ Պետերբուրգում Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ ձեռքբերված պայմանավորվածությունների իրականացումը՝ որպես քաղաքական բանակցությունների պայման: Բացի այդ, որպես հակամարտության կարգավորման հիմք են դիտարկվում Հելսինկյան եզրափակիչ ակտում ներառված սկզբունքները, մասնավորապես՝ ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառումը, պետությունների տարածքային ամբողջականությունը, իրավահավասարությունը և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը [14]:

Նման շեշտադրումներով հայտարարության ընդունումը ՀԱԽ մակարդակով կարևոր իրադարձություն էր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույն ՀԱՊԿ-ում որոշ երկրներ բավական սերտ համագործակցում են Ադրբեյջանի հետ՝ հնարավորության դեպքում առաջ տանելով վերջինիս շահերը:

Հայկական կողմի կարևորության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ 2017 թ.-ի մայիսի 2-ից ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի պաշտոնը ստանձնել է ՀՀ ազգային անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Յուրի Խաչատուրովը [15], իսկ 2018 թ.-ի մարտի 22-ի հրամանագրով գեներալ-լեյտենանտ Հայկազ Բաղմանյանը նշանակվել է ՀԱՊԿ միացյալ շտաբի պետի տեղակալ [16]: Այս երկու պաշտոններում հայազգի ներկայացուցիչների նշանակումը չափազանց կարևոր է, քանի որ ավելի են ամրապնդում հայկական կողմի դիրքերը ՀԱՊԿ-ում:

Փաստացի գտնվելով պատերազմական իրավիճակում՝ Հայաստանի համար կենսական է անվտանգային կայուն և վստահելի համակարգերի առկայությունը, որտեղ իր ուրույն տեղն ունի նաև ՀԱՊԿ-ն: Անհերքելի է այն իրողությունը, որ ՀԱՊԿ-ն հնարավորություն է ընձեռում Հայաստանին կառուցելու առավել կենսունակ անվտանգային համակարգեր: Շնորհիվ ՀԱՊԿ շրջանակում կազմակերպված մի շարք միջոցառումների և զորավարժությունների՝ Հայաստանի զինված ուժերը դառնում են առավել հմուտ և մարտունակ: ՀՀ-ի համար հատկապես կարևորվում է ՀԱՊԿ շրջանակում զեղչային համակարգով ՌԴ-ից զինամթերք գնելու հնարավորությունը: Բացի այդ, կառույցը հարթակ է, որտեղից կարող են բարձրաձայնվել ՀՀ-ին հուզող անվտանգային խնդիրները:

Այնուամենայնիվ, ՀԱՊԿ-ն՝ որպես անդամների հավաքական անվտանգությունն ապահովող ռազմաքաղաքական կառույց, դեռևս կայացման փուլում է, և Հայաստանը պետք է դա նկատի ունենա թե՛ կառույցից իր ակնկալիքները սահմանելիս, թե՛ իր պաշտպանական քաղաքականությունը մշակելիս: Տեղին չէ թերագնահատել ՀԱՊԿ-ի դերը ՀՀ անվտանգային համակարգում, սակայն, առավել վտանգավոր է ՀԱՊԿ-ի

գերագնահատումը, ինչը կարող է ճակատագրական լինել վճռորոշ պահին: Թերևս, կարելի է պնդել, որ ներկայումս ՀՀ-ՌԴ ռազմական երկկողմ համագործակցությունն ավելի հուսալի հենարան է Հայաստանի համար արտաքին սպառնալիքի դեպքում, քան ՀԱՊԿ-ն՝ իր պասիվ կեցվածքով, կամ Բելառուսն ու Ղազախստանը՝ ոչ միանշանակ և վիճահարույց պահվածքով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն, URL: http://www.mfa.am/u_files/file/doctrine/Doctrinarm.pdf (հղումը կատարվել է՝ 15.07.2017):
- [2] ՀՀ ռազմական դոկտրին, URL: <http://www.mil.am/media/2015/07/768.pdf> (հղումը կատարվել է՝ 14.06.2017):
- [3] ՀՀ ՊՆ տեղեկանքը հայ-ռուսական միավորված ՀՕՊ համակարգի մասին, URL: <http://www.lragir.am/index/arm/0/politics/view/134102> (հղումը կատարվել է՝ 12.04.2017):
- [4] Հայ-ռուսական ՀՕՊ համակարգի մասին համաձայնագիրը ԱԺ-ն ընդունեց, URL: <http://www.panorama.am/am/news/2016/06/30/%D4%B1%D4%BA-%D5%80%D5%95%D5%8A/1605345> (հղումը կատարվել է՝ 08.05.2017):
- [5] Բորիսյուժա. ՀՕՊ-երի միավորումը պաշտպանություն է ՀԱՊԿ ամբողջ տարածքում, <http://www.verelq.am/hy/node/8811> (հղումը կատարվել է՝ 02.01.2018):
- [6] Ինչպես է գործելու Ռուսաստանի հետ համատեղ ՀՕՊ համակարգը, պարզաբանել է փոխնախարարը, URL: <http://epress.am/2015/11/12/>:
- [7] Հայաստանում մեկնարկել են ՀԱՊԿ-ի «Ռուբեժ-2008» զորավարժությունները, URL: <http://www.panarmenian.net/arm/news/26576/> (հղումը կատարվել է՝ 18.02.2018):
- [8] **Ղևոնդյան Ա.**, Ազգային շահերի հիմնահարցը ՀՀ անվտանգության ապահովման առաջնային միջավայրում, Երևան 2011, էջ 127-9:
- [9] Учение КСОР ОДКБ «Взаимодействие-2012» в Армении завершилось победой союзников, URL: http://www.odkb-csto.org/training/detail.php?ELEMENT_ID=1157:
- [10] Հայաստանում մեկնարկեց ՀԱՊԿ-ի «Անքակտելի եղբայրություն 2015» զորավարժությունը, URL: <https://m.armeniasputnik.am/photo/20151001/778623.html>:
- [11] Մեկնարկեց «Կոբալտ-2016» զորավարժությունը, URL: <http://www.a1plus.am/1459267.html> (հղումը կատարվել է՝ 22.01.2018):
- [12] ՀԱՊԿ զորավարժությունները Հայաստանում. մոտ 2 հազար զինվորական և ավելի քան 400 զինտեխնիկա, URL: <https://armeniasputnik.am/armenia/20171009/8978412/armenia-hapk-zoravarjutiun.html> (հղումը կատարվել է՝ 29.10.2017):

[13] ՀՀ-ն ստանձնեց ՀԱՊԿ-ում նախագահությունը. Առաջնայնություններից է կառույցի ներուժի մեծացումը, URL: <http://www.panarmenian.net/arm/news/197385/> (հղումը կատարվել է՝ 18.11.2017):

[14] Заявление глав государств – членов ОДКБ по Нагорно-Карабахскому конфликту. URL: http://odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT_ID=8380.

[15] Յուրի Խաչատուրովը նշանակվել է ՀԱՊԿ գլխավոր քարտուղար, URL: <https://razm.info/100254> (հղումը կատարվել է՝ 26.11.2017):

[16] ՆՀ-177-Ա «Հ. Բաղմանյանին Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության Միացյալ շտաբի պետի տեղակալ նշանակելու մասին», URL: <http://www.president.am/hy/decrees/item/4402/> (հղումը կատարվել է՝ 24.01.2018):

Կիրակոսյան Դավիթ

**ՀՀ-ՀԱՊԿ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՕՐԱԿԱՐԳԸ**

Բանալի բառեր՝ ՀՀ, ՀԱՊԿ, Զինված ուժեր, անվտանգություն, ռազմական համագործակցություն:

Հայաստանը՝ որպես ՀԱՊԿ հիմնադիր անդամ-պետություն, ակտիվ գործունեություն է ծավալում դաշինքի շրջանակներում՝ մեծ ներդրում ունենալով կառույցի ռազմաքաղաքական և իրավական հիմքերի կայացման գործում: Հայաստանը փորձում է ամբողջ ծավալով մասնակցել ՀԱՊԿ նախաձեռնություններին՝ նպաստելով կառույցի կատարելագործմանն ու ազգային անվտանգության միջավայրի ամրապնդմանը:

Հոդվածում ներկայացվել է դաշինքի շրջանակներում պետությունների փոխգործակցության հիմնական ուղղությունները և այդ համագործակցության շահավետությունը ՀՀ ազգային անվտանգության ապահովման համատեքստում: Հոդվածի նպատակն է հիմնավորել ՀՀ անդամակցության նպատակահարմարությունը ՀԱՊԿ-ին՝ ներկայացնելով դաշինքի կողմից տրվող երաշխիքները և առկա խնդիրները:

Киракосян Давид

ДИНАМИКА РАЗВИТИЯ ОТНОШЕНИЙ РА-ОДКБ И ПОВЕСТКА ДНЯ В ОБЛАСТИ БЕЗОПАСНОСТИ

Ключевые слова: РА, ОДКБ, Вооруженные силы, безопасность, военное сотрудничество.

Будучи государством-основателем ОДКБ, Республика Армения ведет активную деятельность в рамках организации, внося большой вклад в процесс становлений военнополитических и юридических основ ОДКБ. РА участвует во всех инициативах ОДКБ, способствуя совершенствованию организации и укреплению собственной национальной безопасности.

В статье отмечаются основные направления взаимодействий государств в рамках организации ОДКБ, а также целесообразность альянса в контексте обеспечения национальной безопасности РА.

Kirakosyan David

DYNAMICS OF THE DEVELOPMENT OF RA-CSTO RELATIONS AND SECURITY AGENDA

Key words: RA, CSTO, Armed Forces, security, military cooperation.

Being the founder-state of the CSTO, the Republic of Armenia is actively involved within the organization and has a great contribution to the process of formation of military and political foundations of the CSTO. The RA participates in all CSTO initiatives contributing to the improvement of the organization and strengthening of its own national security.

The article touches upon the main directions of interaction among states within the CSTO organization, as well as the expediency of the alliance in the context of ensuring national security in the Republic of Armenia.